ՀՌՈՒԹԻ ԳԻՐՔ

Տասներկուերորդ հաղորդում

Ընթանալ կյանքի ճանապարհով Տիրոջ վերականգնման մեջ

Գրվածքների ընթերցում. Հռթ 1:16-17, 20-21, 2:10-16, 3:1, 7-13, 4:9-15, Մտթ 7:13-14

I. Երեք գրքերը՝ Հեսուի, Դատավորաց և Հռութի, ներկայացնում են Աստծու շարժման երկու տեսանկյունների պարզ նկարը. Նրա շարժումն Իր տնտեսական Հոգու՝ զորության Հոգու մեջ և Նրա շարժումն Իր էական Հոգու՝ կյանքի Հոգու մեջ՝ Դտվ 13:25, 14:6, Հվի 20:22, Գրծ 1:8, Հռմ 8:2.

Ա. Հեսուի, Քաղեբի և բոլոր դատավորների դեպքում տեսնում ենք Աստծու շարժումը զորությամբ, ինչը լուսաբանված է Սամսոնով՝ որպես մեկով, որը շարժվում էր զորության Հոգու, բայց ոչ կյանքի Հոգու մեջ՝ Դտվ 14:6:

Բ. Հակառակ դրան՝ Հռութի գիրքը կյանքի գիրք է. այդ գրքի նպատակը մեզ ոչ թե զորության մասին ինչ-որ բան պատմելն է, այլ կյանքի բաներն առավելագույնս բացահայտելը՝ որպես օրինակներ օգտագործելով Նոյեմիին, Հռութին և Բոոսին՝ 1:16-17, 20-21, 2:10-16, 3:1, 7-13, 4:9-15:

Գ. Տիրոջ վերականգնման մեջ մենք չպետք է գնանք դատավորների ճանապարհով՝ նպատակ ունենալով զորությամբ համակվելու և մեծ գործեր անելու. եթե գնանք զորության ճանապարհով, այլ ոչ թե կյանքի ճանապարհով, ապա ինչ էլ իրագործենք, ոչ մի նշանակություն չի ունենա:

Դ. Մեզ համար շատ կարևոր է տեսնելը, որ միայն կյանքը կարող է Քրիստոս առաջացնել՝ Ղկս 1:35.

1. Միայն կյանքը կարող է մարդկության մեջ բերել Աստծուն, Քրիստոս առաջացնել, Քրիստոս սպասավորել և Քրիստոսով մատակարարել ամբողջ մարդկային ցեղը՝ Մտթ 1:18, 20-21:
2. Սա իրագործվեց Հռութի և Բոոսի՝ կյանքի մարդկանց կողմից, որոնք գնում էին կյանքի ճանապարհով:

II. Աստծու կյանքի աստվածային և հավիտենական բնության համաձայն՝ Աստծու կյանքը եզակի կյանք է. միայն Աստծու կյանքը կարող է կյանք համարվել՝ Հվի 1:4, 10:10բ, 11:25, 14:6.

Ա. Կյանքը խորհրդավոր է, որովհետև կյանքն Աստված Ինքն է՝ 1:1, 14, 5:26, Եփս 4:18.

1. Աստվածային կյանքը կարող է համարվել Աստծու առաջին և հիմնական հատկանիշը՝ խ. 18, Հվի 5:26, Ա Հվի 5:11-12, Հռմ 8:2:
2. Կյանքն Աստծու բովանդակությունն ու Աստծու արտահոսն է. Աստծու բովանդակությունն Աստծու էությունն է, իսկ Աստծու արտահոսը մեր մեջ Աստծուն՝ որպես կյանքի, ներդնելն է՝ Եփս 4:18, Հյտ 22:1:

3. Կյանքը Քրիստոսն է, և կյանքը մեր մեջ ապրող ու մեր կյանքով դրսևորվող Քրիստոսն է՝ Հվի 14:6, Կոլ 3:4, Գոլ 2:20, Փլպ 1:21ա:
4. Կյանքը Սուրբ Հոգին է՝ Հվի 14:16-17, Ա Կրթ 15:45բ, Հռմ 8:2, Բ Կրթ 3:6:
5. Կյանքը պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստված է, որ բաշխվում է մեր մեջ և ապրում է մեր մեջ՝ Հվի 1:14, 7:37-39, 20:22, Հռմ 8:10, 6, 11:

Բ. Աստծու մտահղացումը մարդուն Իր պատկերով ու ըստ Իր նմանության ստեղծելիս այն էր, որ մարդն ընդունի Նրան՝ որպես կյանքի, որպեսզի մարդը դառնա կյանքի մարդ, Աստվածամարդ, որն արտահայտում է Աստծուն՝ Նրա հատկանիշներով՝ Ծնդ 1:26, 2:9:

III. Մենք պետք է ճանաչենք բարու և չարի գիտության ծառի նշանակությունը և այս ծառից լիովին շրջվենք դեպի կյանքի ծառը՝ խխ. 9, 16-17.

Ա. Կյանքի ծառը խորհրդապատկերում է Քրիստոսի մեջ եղող Եռամեկ Աստծուն, ով Իրեն բաշխում է Իր ընտրյալ մարդկանց մեջ՝ որպես կերակրի տեսքով կյանքի՝ խ. 9:

Բ. Նոր Կտակարանը բացահայտում է, որ Քրիստոսը կյանքի ծառի նախապատկերի կատարումն է՝ Հվի 1:1, 4, 14, 11:25, 14:6, 15:1, 5.
1. Քրիստոսի մասին խոսելով՝ Հվի 1:4-ն ասում է՝ «Նրա մեջ կյանք կար». սա վերաբերում է կյանքի ծառով խորհրդապատկերված կյանքին:
2. Ծննդոց 2-ում պատկերված կյանքը Քրիստոսի մեջ մարմնավորված կյանքն է՝ Ա Հվի 5:11-12, Հվի 1:1, 4, 14:
3. Եթե համատեղենք Հվի 1:4-ն ու 15:5-ը, կգիտակցենք, որ Քրիստոսը, ով Ինքն է կյանքն ու նաև որթատունկը, կյանքի ծառն է:

Գ. Բարու և չարի գիտության ծառը խորհրդապատկերում է Սատանային՝ որպես մարդու համար մահվան աղբյուրի՝ Եբր 2:14.
1. Բարու և չարի գիտության ծառը նաև խորհրդապատկերում է Աստծուց զատ բոլոր բաները:
2. Այն ամենը, ինչ Աստված Ինքը չէ, ներառյալ լավ բաներն ու նույնիսկ սուրբգրային ու կրոնավոր բաները, կարող է օգտագործվել Սատանայի՝ նենգի կողմից՝ եկեղեցիներ մահ բերելու համար՝ Մտթ 16:18, Առկ 16:25, 18:21:

Դ. Հվի 4, 8, 9 և 11-ը չորս դեպքեր են, որոնք լուսաբանում են կյանքի սկզբունքը՝ հակառակ բարու և չարի.
1. Մենք պետք է հոգանք ոչ թե բարու և չարի, այլ կյանքի համար՝ 4:10-14, 20-21, 23-24, 8:3-9, 9:1-3, 11:20-27:
2. Որևէ բան զատորոշելու լավագույն ճանապարհը այն ըստ կյանքի կամ մահվան զատորոշելն է, այլ ոչ թե ըստ ճշտի և սխալի՝ բարու և չարի՝ Հռմ 8:6, Բ Կրթ 11:3:

IV. Քրիստոսը մեր կյանքն է՝ Կոլ 3:4.

Ա. Աստծու կյանքը Քրիստոսի կյանքն է, իսկ Քրիստոսի կյանքը դարձել է մեր կյանքը՝ խ. 4, Հվի 5:26.
   1. Այն, որ Քրիստոսը մեր կյանքն է, նշանակում է, որ Նա ծայրաստիճան սուբյեկտիվ է մեզ համար՝ 1:4, 14:6ա, 10:10բ, Ա Կրթ 15:45բ, Հռմ 8:10, 6, 11:
   2. Անհնարին է առանձնացնել մարդուն իր կյանքից, որովհետև մարդու կյանքն այդ մարդն ինքն է. այսպիսով՝ ասել, որ Քրիստոսը մեր կյանքն է, նշանակում է, որ Քրիստոսը դարձել է մենք, և որ մենք Նրա հետ մեկ կյանք և մեկ ապրելակերպ ունենք՝ Հվի 14:6ա, Փլպ 1:21ա:

Բ. Այն ճշմարտությունը, որ Քրիստոսը մեր կյանքն է, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ մենք պետք է ընդունենք Նրան՝ որպես կյանքի, և ապրենք Նրան մեր ամենօրյա կյանքում՝ Կղս 3:4, Հվի 6:57.
   1. Քրիստոսը պետք է լինի մեր կյանքը գործնական առումով և փորձառության մեջ. օր օրի մենք պետք է փրկվենք Նրա կյանքում՝ Կղս 3:4, Ա Կրթ 15:45բ, Հռմ 5:10:
   2. Նոր մարդը Քրիստոսին որպես մեր կյանքն ընդունելու և Նրան ապրելու ինքնաբերական արդյունքն է՝ Կղս 3:3-4, 10-11:

V. Աստծու առջև մեր կյանքի և աշխատանքի երկու հնարավոր ճանապարհ կա՝ դեպի կյանք տանող ճանապարհն ու դեպի ոչնչացում տանող ճանապարհը՝ Մտթ 7:13-14.

Ա. Դեպի կյանք տանող ճանապարհով ընթանալու համար մենք պետք է մտնենք նեղ դարպասով ու հետո քայլենք անձուկ ճանապարհով՝ խխ. 13-14.
   1. Նեղ դարպասը ներգործության է ենթարկում ոչ միայն մեր արտաքին վարքը, այլև մեր ներքին շարժառիթը:
   2. Հին մարդը, «ես»-ը, մսեղին, մարդկային պատկերացումն ու աշխարհը՝ իր փառքով հանդերձ, ներս թափանցել չեն կարող. մտնել կարող է միայն այն, ինչ համապատասխանում է Աստծու կամքին՝ խ. 21, 12:50:
   3. Մենք պետք է նախ՝ մտնենք նեղ դարպասով, իսկ հետո՝ քայլենք անձուկ ճանապարհով՝ կյանքի տևողություն ունեցող ճանապարհով, որ դեպի կյանք է տանում՝ 7:14:
   4. «Կյանք» բառը Մտթ 7:14-ում վերաբերում է Աստծու հավիտենական կյանքով լցված թագավորության հավերժ երանելի վիճակին. այս կյանքն այսօր թագավորության իրականության մեջ է, իսկ գալիք դարաշրջանում թագավորության դրսևորման մեջ է լինելու՝ 19:29, Ղկս 18:30:

Բ. Ընդարձակ ճանապարհը համապատասխանում է աշխարհիկ համակարգերին, որոնք բավարարում են բնական ճաշակները և ուղղված են ամբոխ ներգրավելուն, մարդկային կարիերա ապահովելուն և մարդկային նախաձեռնություններ իրականացնելուն. ոչնչացումը, դեպի որը տանում է ընդարձակ ճանապարհը, վերաբերում է ոչ թե մարդու կոր-

ծանվելուն, այլ նրա գործերի և աշխատանքի ոչնչացմանը՝ Ա Կրթ 3:15, Մտթ 13:31-33, Հյտ 2:13, 20, 17:4-5:

Գ. Տիրոջ վերականգնման ճանապարհը կյանքի ճանապարհն է, որ տանում է դեպի կյանքում եղող կենդանի պարգևը գալիք դարաշրջանում երկինքների թագավորության դրսևորման մեջ՝ Սղմ 16:11, Երմ 21:8, Մտթ 19:29, Ղկս 18:30, Ա Կրթ 3:13-15, 15:58:

VI. Մենք պետք է ապրենք կյանքի զգացողությամբ՝ մեր ներսում եղող աստվածային կյանքի զգացումով, գիտակցությամբ՝ Հռմ 8:6, Եփս 4:18-19.

Ա. Կյանքի զգացողության աղբյուրը աստվածային կյանքն է, կյանքի օրենքը, Սուրբ Հոգին, մեր մեջ հարակայող Քրիստոսը և մեր մեջ գործող Աստված՝ Հռմ 8:2, 10-11, Փլպ 2:13:

Բ. Աստվածային կյանքը բարձրագույն կյանքն է՝ ամենահարուստ, ամենաուժեղ և ամենասուր զգացումով. այս զգացումը կյանքի զգացողությունն է՝ Եփս 4:18:

Գ. Կյանքի զգացողությունը մեզ առաջնորդում, կառավարում, վերահսկում և ուղղորդում է՝ մեզ ճանաչել տալով՝ արդյոք աստվածային կյանքում ենք ապրում, թե բնական կյանքում, և արդյոք մսեղիում ենք ապրում, թե հոգում՝ Հռմ 8:6:

VII. Մենք պետք է հաղթենք եկեղեցու վրա մահվան հարձակումներին և կառուցենք Քրիստոսի Մարմինը Քրիստոսի հարության կյանքում՝ Մտթ 16:18, Հվի 11:25, Եփս 1:22-23, 4:16.

Ա. Մեր հոգում եղող Քրիստոսի հարության կյանքով մենք կարող ենք հաղթել եկեղեցու վրա մահվան հարձակումներին՝ Մտթ 16:18, Գրծ 2:24, Բ Տմթ 1:10.

1. Եդեմից սկսած՝ Աստծու և Սատանայի միջև տեղի ունեցող ընդհարումը միշտ կապված է եղել մահվան ու կյանքի հարցի հետ՝ Հռմ 8:6, 10-11, Եբր 2:15:
2. Մտթ 16:18-ը մեզ ցույց է տալիս, թե որ աղբյուրից են հասնելու հարձակումները եկեղեցու վրա, «դժոխքի դարպասներից», այսինքն՝ մահից. Սատանայի հատուկ խնդիրը եկեղեցու ներսում մահ տարածելն է, իսկ եկեղեցու առնչությամբ նրա մեծագույն վախը եկեղեցու դիմադրելն է մահվան իր զորությանը՝ Հյտ 2:8, 10-11:

Բ. Մենք պետք է հոգում վարժվենք, որպեսզի Քրիստոսի հարության կյանքում կառուցենք Քրիստոսի Մարմինը՝ Եփս 2:6, 21-22, 4:16, Հյտ 1:18, 2:8, Փլպ 3:10.

1. Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի բնությունը հարությունն է, իսկ հարության իրականությունը Քրիստոսն է՝ որպես կենդանարար Հոգին՝ Հվի 11:25, Գրծ 2:24, Եփս 1:19-23, Ա Կրթ 15:45բ:
2. Երբ ապրում ենք մեր ներսում եղող աստվածային կյանքի միջոցով, մենք ապրում ենք հարության մեջ եղող կյանքով Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Փլպ 3:10-11, Եփս 4:15-16, Կղս 2:19, 3:15:

VIII. «Մենք գիտենք, որ մահից կյանքի մեջ ենք անցել, որովհետև սիրում ենք եղբայրներին»՝ Ա Հվի 3:14ա.

Ա. Մահը բանսարկուից է՝ Աստծու թշնամուց, Սատանայից, որին խորհրդապատկերում է բարու և չարի գիտության ծառը, որը մահ է բերում՝ Ծնդ 2:9, 17:

Բ. Կյանքն Աստծուց է՝ կյանքի աղբյուրից, ում խորհրդապատկերում է կյանքի ծառը, որի արդյունքը կյանքն է՝ խխ. 9, 16-17:

Գ. Մահն ու կյանքը ոչ միայն երկու աղբյուրներից են՝ Սատանայից և Աստծուց, այլև երկու էություններ են, երկու տարրեր և երկու ոլորտներ՝ Հվի 5:24:

Դ. Մահից կյանքի մեջ անցնելը մահվան աղբյուրից, էությունից, տարրից ու ոլորտից կյանքի աղբյուրի, էության, տարրի ու ոլորտի մեջ անցնելն է. սա տեղի ունեցավ մեր վերածննդի ժամանակ՝ Ա Հվի 3:14ա, Հվի 3:3, 5, 15:

Ե. Մենք գիտենք, այսինքն՝ ներքին գիտակցություն ունենք, որ մահից կյանքի մեջ ենք անցել, որովհետև սիրում ենք եղբայրներին. եղբայրների հանդեպ սերը (Աստծու սերը) սրա ուժեղ ապացույցն է՝ Ա Հվի 3:14ա.

1. Տիրոջ հանդեպ հավատքը մահից կյանքի մեջ անցնելու ճանապարհն է. եղբայրների հանդեպ սերն այն ապացույցն է, որ մահից կյանքի մեջ ենք անցել՝ Հվի 5:24, Ա Հվի 3:14ա:
2. Հավատք ունենալը հավիտենական կյանքը ստանալն է. սիրելը հավիտենական կյանքով ապրելն ու այն արտահայտելն է՝ Հվի 3:15, 36, Ա Հվի 3:11, 14-18, 4:7-12, 16, 19-21:

©2021 *LivingStreamMinistry*